



22 Hanrapetutyian Street,
Area 16, 5th floor
0010 Yerevan
Republic of Armenia
Tel: +374(10) 582-487
Tel: +374(10) 582-478
Fax: +374(10) 562-404
www.bakertillyarmenia.com
Email:
info@bakertillyarmenia.com

03.04.2013թ.

N 011303

Հ Ա Ս Ս Ա Ս ՈՒ Մ ԵՄ

«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ
Գլխավոր տնօրեն

Փ.Գևորգյան

Առդիտորական ծառայությունների իրականացման
լիցենզիա թիվ ԱՃ 054՝ տրված ՀՀ ֆինանսների
և էկոնոմիկայի նախարարության կողմից



ԱՆԿԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

**«ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ
ՍԱՀՄԱՆԱՓՈԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՍԱՄՆԱԿԻՑՆԵՐԻՆ**

Մենք իրականացրել ենք «Նաիրի Ինշուրան» Ապահովագրական ՍՊԸ-ի կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև հաշվապահական քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

Մենք իրականացրել ենք նաև «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջների կիրառման ամբողջականության ու հավաստիության ստուգում:

Մասնավորապես՝

- 1) Ընկերության տեխնիկական պահուստների համարժեքության ուսումնասիրություն
- 2) Ընկերության տնտեսական նորմատիվների հաշվարկման մեթոդաբանության և սահմանաչափերին համապատասխանության ուսումնասիրություն
- 3) Ընկերության տեխնիկական պահուստներին համարժեք ակտիվների տեղաբաշխման համապատասխանության ուսումնասիրություն
- 4) Ընկերության ներքին աուդիտի գործունեության, ներքին հսկողության համակարգի արդյունավետության ուսումնասիրություն.
- 5) Ընկերության ներքին տեղեկատվական համակարգի որակի ուսումնասիրություն.
- 6) Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների ամբողջականության ու հավաստիության ուսումնասիրություն:

Ֆինանսական հաշվետվությունների և հաշվարկների համար տնօրինության պատասխանատվությունը

Սույն հաշվետվությունների՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն պատրաստման և արժանահավատ ներկայացման (ՖՀՄՍ) համար պատասխանատու է տնօրինությունը: Այդ պատասխանատվությունը ներառում է խաբեության կամ սխալի հետևանքում առաջացած էական խեղաթյուրումներ չպարունակող ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և իրական ներկայացման նկատմամբ ներքին վերահսկողության մշակումը, կիրառումը և պահպանումը, պատշաճ հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրությունը և կիրառումը, ինչպես նաև տվյալ հանգամանքներում ողջամիտ հաշվապահական գնահատումների կատարումը:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունը իրականացված աուդիտի հիման վրա սույն ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ եզրակացություն արտահայտելն է: Մենք աուդիտը իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտների համաձայն: Այս ստանդարտները պահանջում են, որպեսզի մենք պահպանենք էթիկայի կանոնները, և աուդիտը պլանավորենք և իրականացնենք այնպես, որպեսզի ձեռք բերենք բավարար երաշխիքներ, որ ֆինանսական հաշվետվությունները գերծ են էական խեղաթյուրումներից:

Աուդիտը ներառում է ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ աուդիտորական ապացույցների ձեռքբերմանն ուղղված ընթացակարգերի իրականացում: Ընթացակարգերի ընտրությունը հիմնված է աուդիտորի դատողությունների վրա, ներառյալ՝ խաբեության կամ սխալի հետևանքում ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի գնահատումը: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորը հաշվի է առնում «Նաիրի Ինչուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և արժանահավատ ներկայացման ապահովմանն ուղղված ներքին վերահսկողությունը, ինչը թույլ է տալիս մշակել տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, «Նաիրի Ինչուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ի ներքին վերահսկողության արդյունավետության մասին կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտը ներառում է կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության և տնօրինության կատարած հաշվապահական գնահատականների հիմնավորվածության, ինչպես նաև ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները պատշաճ և բավարար հիմք են հանդիսանում մեր աուդիտորական եզրակացության համար:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌՌԻՑՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Մեր կարծիքով՝

- 1) ֆինանսական հաշվետվությունները տալիս են 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Նաիրի Ինչուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ի ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը և կազմված են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):
- 2) Ընկերության կողմից հաշվարկված տեխնիկական պահուստները բոլոր էական առումներով համաբժեք են և համապատասխանում են Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին:
- 3) Ընկերության տնտեսական նորմատիվները բոլոր էական առումներով արժանահավատ են և համապատասխանում են «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին:
- 4) Ընկերության տեխնիկական պահուստներին համաբժեք ակտիվները բոլոր էական առումներով տեղաբաշխված են համաձայն «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերի պահանջների:
- 5) Ընկերության ներքին հսկողության համակարգը բոլոր էական առումներով համապատասխանում է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին:
- 6) Ընկերության տեղեկատվական համակարգը որոշակի վերապահումներով է համապատասխանում «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին:
- 7) Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները ամբողջական են և բոլոր էական առումներով արժանահավատ են:

Հատուկ ուշադրություն պահանջող հարցեր

Առանց մեր կարծիքը որակավորելու, Ձեր ուշադրությունն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություն 28-ի պարզաբանմանը՝ Ընկերությունը իր ֆինանսական հաշվետվություններում որպես պարտավորություն ճանաչել է հավասարակշռման պահուստ: Նշված պահուստի ճանաչումը արգելված է ֆինանսական հաշվետվությունների միջազգային թիվ 4 «Ապահովագրության պայմանագրեր» ստանդարտով, սակայն սահմանված է ՀՀ ԿԲ-ի (լիազոր մարմին) նորմատիվ իրավական ակտերով:

Աուդիտոր

Մ.Սկրտչյան 
25.03.2013թ.